Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 29-ի N 163-Ա
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ գյուղի դպրոցի մասնակի վերանորոգման աշխատանքներ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /իրավաբանական և ֆիզիկական անձինք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պող. 26, ՀՎՀՀ՝02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզի Լանջիկ գյուղ, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 1.041.330,00 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի Լանջիկ գյուղի դպրոց
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. մարտի 15-ից մինչև 2019թ. հունիսի 11-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. մարտի 15-ից մինչև 2019թ. հունիսի 11-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է ապամոնտաժել հին պատուհանները և տեղադրել նոր մետաղապլաստի պատուհաններ, պատուհանագոգերի և շեպերի քանդում և նոր շեպերի ու պատուհանագոգերի իրականացում, չուգունե մարտկոցների և խողովակների ներկում: Արժեքը՝ 1.041.330,00 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի N 1 հավելվածի աշխատանքների կատարման ցանկի համաձայն պայմանագրի արժեքը կազմում է 1.041.330,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ